ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

2022 թ-ի հոկտեմբերի 31-ին կնքված N «**ՀՀ ԱՄՎՀ ԳՀԾՁԲ 22/3**» ծածկագրով պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին

ք. Էջմիածին «31» մայիսի 2023 թ.

Վաղարշապատի համայնքապետարանը, ի դեմս համայնքի ղեկավար Դ. Գասպարյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Մկրտիչ Սուրենի Մելքոնյան» Ա/Ձ-ն, ի դեմս Մ. Մելքոնյանի, որը գործում է սեփական նախաձեռնությամբ (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, հիմք ընդունելով «31» հոկտեմբերի 2022 թ. կնքված № «ՀՀ ԱՄՎՀ ԳՀԾՁԲ 22/3» ծածկագրով պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 7.5 և 7.15 կետերը, ինչպես նաև Պատվիրատուի «30» մայիսի 2023 թ. N 2596 գրությունը, կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին:

1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 «31» հոկտեմբերի 2022 թ. կնքված № «ՀՀ ԱՄՎՀ ԳՀԾՁԲ 22/3» ծածկագրով պայմանագրի Հավելված N 1-ով սահմանված ***Վաղարշապատի համայնքապետարանի Էջմիածին քաղաքի թիվ 14 «Ձնծաղիկ» մանկապարտեզ ՀՈԱԿ-ի հիմնանորոգման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայության*** (այսուհետ՝ Ծառայություններ) մատուցումը դադարեցվում է՝ մինչև այդ նպատակով ֆինանսական միջոցների նախատեսումը:

1.2 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցումը կվերսկսվի այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով:

1.3 Պայմանագիրը լուծվում է, եթե սույն համաձայնագիրը կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում:

2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1 Սույն Համաձայնագրում չնշված՝ կողմերի Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները, այդ թվում Ծառայությունների հանձնման-ընդունման հետ կապված և այլ հարաբերությունները թողնվում են անփոփոխ:

2.2 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

2.3 Սույն Համաձայնագիրը կնքվում է 1 /մեկ/ էջից, 3 /երեք/ օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, Պատվիրատուին տրվում է երկու օրինակ, Կատարողին՝ մեկ:

2.4 Սույն համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Վաղարշապատի համայնքապետարան	«Մկրտիչ Սուրենի Մելքոնյան» Ա/Ձ
Արմավիր, ք. Էջմիածին, Սբ. Մ. Մաշտոց 0	ք. Երևան, Իսակով 44/2 շենք, բն. 13
ՀՀ ՖՆ Գործառնական վարչ.	«ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ
Հ/Հ՝ 900322201030	Հ/Հ՝ 16046083951900
ՀՎՀՀ՝ 04440307	ՀՎՀՀ՝ 52173748
Համայնքի ղեկավար՝ ____________ Դ. Գասպարյան	Ա/Ձ՝ ____________ Մ. Մելքոնյան
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ.	Կ.Տ.